

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (7ժ) ուսուցչի թափուր աշխատատեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1) Հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
- 2) Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ), «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- 3) Անձնագիր, անձնագրի պատճենը,
- 4) Աշխատանքային գրքույկ,
- 5) Ինքնակենսագրություն (Ձև 4),
- 6) Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը
- 9) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

Փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սյուն հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև օգոստոսի 27 ներառյալ, ամեն օր բացի ոչ աշխատանքային օրերից, ժամը 10.00-ից 15.00-ը:

*Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:*

Մրցույթը տեղի կունենա 2018թ. օգոստոսի 29-ին ժամը 12.00-ին, «Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Լեռնակերտ: Տեղեկությունների համար զանգահարել (093)14-76-76 հեռախոսահամարով: